ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԱՆԱՆՈՒՆ ՖՈԼԻՍՆԵՐԻ ԳԱՆՁ՝ ԾԱՂԿԱՁՈՐԻ ԽԱՉԵՐ ՀՆԱՎԱՅՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը Հ. Մելքոնյանի ղեկավարությամբ 2007-2008 թթ. իրականացրեց պեղումներ Ծաղկաձոր քաղաքի Խաչեր կոչվող հնավայրում՝ Կեչառիս վանական համալիրի հարավարևմտյան կողմում գտնվող բլրի գագաթին: Պեղումները կատարվել են 1500 ք/մ տարածք զբաղեցնող, խիստ ավերված միջնադարյան ամրոցի պարսպի հարավային և հյուսիսային պատերի արտաքին (ԱՀ2) և ներքին (ԱՀ1) հատվածներում: Հայտնաբերված հնագիտական նյութը հիմնականում IX-XIV դարերի խեցեղենի մանր բեկորներ են: Չնայած հուշարձանի վատ պահպանվածությանը և հետազոտվող տարածքն ընդարձակելու հնարավորության բացակայությանը՝ պեղումները պսակվեցին մեծ հաջողությամբ, քանի որ 2008 թ. հայտնաբերվեց XI դ. բյուզանդական պղնձե դրամներով լի կճուճ՝ in situ, որը, բարեբախտաբար, դարերի ընթացքում չէր դարձել ամրոցն ավերողների և գանձագողերի ավար: Գանձը հայտնաբերվել է հարավային պարսպապատի ներսի հիմնային շարվածքի վրա, որից պահպանվել էր միայն մեկերկու շարք, իսկ տեղ-տեղ ամբողջությամբ բացակայում էր (տե՛ս տախ. 1, նկ. 1, 2): Կճուճը[1], որը թվագրվում է X-XI դարերով, գտնվեց կիսաթեք պառկած վիճակում, պսակը՝ դեպի հարավ: Այն պարունակում էր 297 բյուզանդական բարձրորակ և լավ պահպանված անանուն ֆոլիսներ, որոնցից 294-ը անոթի մեջ էին, իսկ երեքը՝ շուրջը թափված (տե՛ս տախ. 2, նկ. 1, 2): Սկզբում բացվեցին երեք դրամները, ապա՝ կճուճը: Գանձը կշռում էր 4493.65 գրամ (դրամները մաքրելուց հետո՝ 4451.61 գ.):

Ֆոլիսները ժամանակավորապես ի պահ են տրված Ծաղկաձորի Օրբելի եղբայրների տուն-թանգարանում՝ մինչև նախատեսվող հնագիտական թանգարանի կառուցումը: Պեղումների ավարտից հետո ամրոցի տարածքում իրականացվեցին շինարարական աշխատանքներ, և այն՝ որպես հնագիտական հուշարձան, այլևս գոյություն չունի:

Անանուն ֆոլիսների ի հայտ գալը բացառիկ երևույթ էր բյուզանդական դրամաթողարկման պատմության մեջ, որը պայմանավորված էր մի շարք տնտեսական, քաղաքական և դավանաբանական շարժառիթներով: Պղնձե դրամների այդ շարքի թողարկումը սկսվել էր Հովհաննես I Չմշկիկ կայսեր օրոք (969-976 թթ.): Նախկինում միայն ոսկե դրամների վրա պատ-

[1] Այն պատրաստված է մանր ավազախառն աղյուսագույն կավից, ունի հարթ հատակ, ուռուցիկ իրան՝ չորս վերադիր ելուստներով, և դեպի դուրս թեքված շուրթ: Կճուճն ունեցել է կափարիչ, որի մասին է վկայում վզի ներսի հատվածի ելուստավոր երիզը: Գանձը հայտնաբերելիս անոթը կափարիչով ծածկված չէր:

կերվող Քրիստոսի կիսանդրին այժմ հայտնվեց նաև պղնձի վրա: Այս հանգամանքն այնքան կարևոր էր, որ պատմիչ Հովհաննես Սկիլիցեսն այդ մասին հատուկ նշել է իր երկում[2]: Հովհաննես Ի-ը և նրան հաջորդած կայսրերը՝ մինչև Իսահակ Ի Կոմնենոսը (1057-1059 թթ.), թողարկեցին միմիայն անանուն, այսինքն՝ առանց կայսեր անվան հիշատակության ֆոլիսներ: 1059-ից հետո կրկին հայտնվեցին կայսեր անունը կրող ֆոլիսները, սակայն անանունների թողարկումը զուգահեռաբար շարունակվեց մինչև Ալեքսիոս Ի-ի՝ 1092 թվականին կատարած դրամական բարեփոխումը: Հովհաննես Չմշկիկի օրոք հատված անանուն ֆոլիսները, որոնք ունեին իր նախորդների պղնձե դրամների կշռային ստանդարտը, նոր որակ ստացան Վասիլ Ii-ի ժամանակ: Վերջինս, փորձելով *վարկային* նշանակություն տալ պղնձե դրամներին, առաջին հերթին փոխեց դրանց կշռային ստանդարտը՝ ֆոլիսները թողարկելով հատուկ այս դրամների համար պատրաստված ավելի մեծ և ծանր հատածույլերի վրա: Առանց կայսեր պատկերի և անվան այս դրամները Վասիլը կարողացավ օգտագործել կայսրության քաղաքական և տնտեսական ազդեցությունն ընդլայնելու և ամրապնդելու նպատակներով:

Վասիլ կայսրը որոշ փոփոխություններ կատարեց նաև ոսկե դրամներում. նա, հիստամենոն նոմիսմայի կշիռը թողնելով նույնը, հատածույլը բարակացնելու հաշվին մեծացրեց դրամի տրամագիծը: Այս քայլով նախ տարբերակելի դարձավ 2 կարատով թեթև ոսկե տետարտերոնը հիստամենոնից և երկրորդ, ինչպես ֆոլիսների դեպքում, այստեղ նույնպես արտաքին փոփոխությունով ընդգծվեց դրամի արժևորումը:

Այս փոփոխությունների գլխավոր պատճառներից մեկը արծաթի սղությունն էր, որը պատմագիտական գրականության մեջ հայտնի է *արծաթի ճգնաժամ* եզրույթով: Այն սկիզբ էր առել Արևելքում, արագորեն տարածվել էր դեպի Արևմուտք և մեծ ազդեցություն գործել Բյուզանդիայի դրամական տնտեսության վրա[3]: Ուստի պատահական չէ, որ խոշոր չափի պղնձե դրամների ծագումը համընկավ հենց այս ժամանակահատվածի հետ: Հիսուս Քրիստոսն ընդունելի կերպար էր քրիստոնեական եկեղեցու բոլոր ուղղությունները դավանողների, ինչպես նաև մահմեդականների համար: Այս առումով պղնձե դրամների վրա կայսեր պատկերի փոխարինումը Քրիստոս Պանտոկրատորով (Ամենակալով) ճանապարհ էր հարթում միջազգային շուկայում դրանց ազատ շրջանառության համար՝ թե՛ Արևելքում և թե՛ Արևմուտքում: Այս նախաձեռնությունն այնքան հաջող էր, որ անանուն ֆոլիսը շարունակեց թողարկվել գրեթե 120 տարի, որից հետո էլ երկար ժամանակ մնաց շրջանառության մեջ նույնիսկ այն տարածքներում, որտեղ թեև բնակչությունն առավելապես քրիստոնյա էր, բայց կառավարիչները մահմեդական էին:

Անանունների դասակարգմամբ առաջինը զբաղվել են Վ. Ռոթը[4], Ա.

---

[2] Տե՛ս **Հովհաննես Սկիլիցես**, Համառոտություն պատմությանց, թարգմ. և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Եր., 1979, էջ 53:

[3] Տե՛ս **Ա. Զոհրապեան**, Սելջուկեան դրամներ՝ քրիստոնէական պատկերագրութեամբ, «Հանդէս Ամսօրեայ», 1-12, Եր., 2006, էջ 397:

[4] Տե՛ս **Wroth W.**, Catalogue of the Imperial Byzantine Coins in the British Museum, Vol. II, London, 1908, էջ 480-483:

Բելինջերը[5] և Մ. Թոմսոնը[6], ովքեր, այդ երկար շարքում առանձնացնելով դասեր, քննարկել են դրանց հարաբերական և բացարձակ ժամանակագրության խնդիրները: Թողարկումները տարբերակելու համար Մ. Թոմսոնը դրանք բաժանել է այբբենական հաջորդականությամբ 12 դասերի՝ A-ից մինչև L տառերով: Դասակարգման այս համակարգը ներկայումս կիրառվում է բոլոր հետազոտողների կողմից:

Ծաղկաձորի գանձը բաղկացած է բացառապես A դասի անանուն ֆոլիսներից՝ հետևյալ պատկերագրությամբ. դիմերես՝ Հիսուս Քրիստոսի դիմահայաց կիսանդրին՝ լուսապսակով, հագին՝ *տունիկա* և *հիմատիոն*, աջ ձեռքով օրհնում է, ձախում՝ Ավետարանը, դրամի շրջագծով՝ +ЄMMA NOVHΛ գրությունը, կիսանդրուց աջ և ձախ՝ $\overline{IC}$ $\overline{XC}$. դարձերես՝ հունարեն, բայց հունա-լատինատառ քառատող գրություն՝ +IhSЧS/ XRISTЧS/ bASILЄЧ/ bASILЄ (*Ιησούς Χριστός Βασιλεύς Βασιλέων*):

A դասն անանուն ֆոլիսների սերիայում ամենաերկար թողարկվածն է՝ շուրջ 60 տարի, որը բավականին մեծ ժամանակահատված է, որպեսզի տիպը, չնայած հորինվածքի կայուն կառուցվածքին, կրեր ոճական, պատկերագրական, չափագրական բազում փոփոխություններ: Անանուն ֆոլիսների և հատկապես A դասի վերաբերյալ հրատարակվել են բազմաթիվ ուսումնասիրություններ[7], այնուամենայնիվ մինչ օրս կան մի շարք չպարզաբանված խնդիրներ: Դրանց լուծման համար մեծ կարևորություն ունեն հատկապես հնագիտական միջավայրում հայտնաբերված անաղարտ գանձերը: Այս առումով տվյալ գանձը, որը հայտնաբերվել է մեր պեղած տեղամասում (ԱՀ1), ունի հայտնաբերման մանրամասների վերաբերյալ ամբողջական և ստույգ տվյալներ:

Գանձի պատմագիտական արժևորման համար մեծ նշանակություն ունի նրա պարունակած դրամների և մասնավորապես ամենաուշ թողարկումների հնարավորինս ճշգրիտ թվագրումը: Մինչդեռ A դասի անանունների թվագրման հարցում հետազոտողների միջև կան որոշակի տարակարծություններ:

A դասի սկզբնական թողարկումները՝ A1-ը, բոլոր հետազոտողները թվագրում են Հովհաննես I Չմշկիկի կառավարման շրջանով՝ 969-976 թթ.: Այս խումբն ունի մի քանի ակնհայտ առանձնահատկություններ. դրամնե-

---

[5] Տե՛ս **Bellinger A.**, The Anonymous Byzantine Bronze Coinage, *The American numismatic society, Numismatic Notes and Monographs,* № 35, 1928, էջ 1-27:

[6] Տե՛ս **Thompson M.**, *The Athenian Agora*, Vol. II, Coins. Princeton, 1954, էջ 110-115:

[7] Տե՛ս **Wroth W.**, նշվ. աշխ., էջ 480-483, **Bellinger A.**, նշվ. աշխ., էջ 1-27, **Thompson M.**, նշվ. աշխ., էջ 110-115, **Whitting P**., The Anonymous Byzantine Bronze. *Numismatic Chronicle* 6th ser. 15, 1955, էջ 89-99, **Dimian E**., Cu privire la cronologia si atribuirea monedelor anonime bizantine de bronz, *Studii şi Cercetări de Numismatică,* No 3, 1960, էջ 197-221, **Metcalf D.**, Bronze Coinage and City Life in Central Greece circa AD 1000, *Annual of the British School at Athens* 60, 1965, էջ 1-40, **Metcalf D.,** Interpretation of the Byzantine 'Rex Regnantium' Folles of class A, c. 970-1030, *Numismatic Chronicle*, Vol. 10, 1970, էջ 199-219, **Morrison C**., *Catalogue des Monnaies Byzantines de la Bibliothèque Nationale,* Paris, 1970, էջ 581-611, **Grierson Ph., Bellinger A.,** *Byzantine Coins in the Dumbarton Oaks and Whittemore Collections*, vol. III, part 2, Washington, 1973, էջ 634-647, **Metcalf W.,** Early Anonymous Folles from Antioch and the Chronology of Class A, *The American numismatic society, Museum Notes* 21, 1976, էջ 109-128, **Ivanišević V**., Interpretation and Dating of the Folles of Basil II and Constantine VIII—The Class A2, *Zbornik Radova Vizantoloshkog Instituta,* 27-28, 1989, էջ 19-41:

ը հաճախ վերահատված են Հովհաննես I-ին նախորդած Կոստանդին VII, Ռոմանոս II և Նիկեֆորոս II կայսրերի ֆոլիսների վրա: Քրիստոսի պատկերի գեղարվեստական մեկնաբանությունը, գրության ոճը և կշռային ստանդարտը համընկնում են վերջիններիս թողարկումների հետ: Գանձում, սակայն, A1 դասի դրամներ չկան. բոլորը պատկանում են A2-ին, որի թվագրման վերաբերյալ կան զանազան կարծիքներ.

Ռոթ[8]	969-1034	Հովհաննես I	Վասիլ II	Կոստանդին VIII	Ռոմանոս III
Բելինջեր[9]	989-1034		– ” –		– ” –
Թոմսոն	989-1028		– ” –		
Գրիերսոն	976-1030/5		– ” –	– ” –	– ” –
Մեթքալֆ[10]	976-1030		– ” –	– ” –	
Իվանիշևիչ[11]	976-1028		– ” –	– ” –	

Մենք համամիտ ենք այն տեսակետին, որ A2 դասի թողարկումն ավարտվել է Կոստանդին VIII-ի կառավարման տարիներին: Նրան հաջորդած Ռոմանոս III կայսրը պատկերագրական փոփոխություններ կատարեց ոսկե և արծաթե դրամների տիպերում: Կարելի է ենթադրել, որ նրա օրոք փոխվել է նաև պղծե դրամների պատկերագրությունը: Ռոմանոսը, որը միայն կնոջ միջոցով էր կապվում Մակեդոնյան հարստության հետ, կարող էր նոր՝ B դասի թողարկման մեկնարկողը լինել, ինչը բացառվում է Կոստանդին VIII-ի դեպքում: Վերջինս իր եղբայր Վասիլ II-ի հետ միասին իշխեց 49, իսկ միայնակ՝ ընդամենը 3 տարի: Եղբոր կենդանության ժամանակ Կոստանդինը չէր մասնակցում երկրի կառավարման գործերին: Ամենայն հավանականությամբ, Կոստանդինի օրոք A դասի անանուն ֆոլիսների թողարկումը շարունակվել է նույնությամբ՝ պահպանելով դրամների դիմերեսի և դարձերեսի հորինվածքը. դրանք ոճապատկերագրական կապեր ունեն նրա ոսկե դրամների հետ, իսկ չափագիտական տվյալներով համապատասխանում են անանուն ֆոլիսների հաջորդ՝ B դասին: Ծաղկաձորի գանձի դրամների վերլուծությամբ պարզվեց, որ դրանում A2 դասի ուշ փուլի (կամ A3 դասի), այսինքն՝ Կոստանդին VIII-ի թողարկումներ չկան:

Վասիլ II և Կոստանդին VIII կայսրերի ժամանակաշրջանին վերաբերող անանուն ֆոլիսների առանձնահատկությունն այն է, որ երկարատև թողարկման ընթացքում պահպանելով դրամի դիմերեսի և դարձերեսի ընդհանուր հորինվածքը՝ փոփոխություններ են կրել որոշ մանրամասներում: Դրանք դրսևորվում են Քրիստոսի լուսապսակի, Ավետարանի և դար-

---

[8] Վ. Ռոթն այս սերիայի բոլոր ֆոլիսներն անվանել է I դաս՝ չառանձնացնելով Հովհաննես Չմշկիկի օրոք թողարկված դրամները (տե՛ս **Wroth W.**, նշվ. աշխ., էջ 480-483): Բելինջերը տարբերակում է մտցրել՝ Հովհաննես I-ի օրոք թողարկվածներին տալով «I դասի փոքր», իսկ նրանից հետո թողարկվածներին՝ «I դասի մեծ» անվանումները (տե՛ս **Bellinger A.**, նշվ. աշխ., էջ 1-27): Մ. Թոմսոնից սկսած՝ այդ խմբերը համապատասխանաբար կոչվում են՝ A1 և A2 (տե՛ս **Thompson M.**, նշվ. աշխ., էջ 110-115):

[9] Ա. Բելինջերը, ապա Մ. Թոմսոնը կարծում են, որ A2 դասի թողարկումը սկսել է Վասիլ II-ը Վարդաս Փոկասի ապստամբությունը ճնշելուց հետո՝ 989 թ. (տե՛ս **Bellinger A.**, նշվ. աշխ., էջ 15):

[10] Դ. Մեթքալֆն ավելացրել է նաև A3 դաս՝ այն վերագրելով միայն Կոստանդին VIII-ին (տե՛ս **Metcalf D.**, նշվ. աշխ., էջ 218):

[11] Վ. Իվանիշևիչը հավանական է համարում, որ A2 դասի առաջին թողարկումները կարող են սկսված լինել Հովհաննես I Չմշկիկի օրոք (տե՛ս **Ivanišević V.**, նշվ. աշխ., էջ 37):

ձերեսի գրությունից վեր ու վար հատվածներում: Այդ փոփոխությունները հանդես են գալիս տարբեր համադրություններով, որոնց շնորհիվ հետազոտողները կազմել են A դասի տարբերակների աղյուսակ: Առաջինն այդ արել է Ա. Բելինջերը 1928 թվականին՝ առանձնացնելով A դասի 51 տարբերակ[12], որոնց համարակալումն ամրագրվեց հետագա ուսումնասիրողների կողմից: Նրա դասակարգումը թույլ է տալիս տարբերակել թողարկումները, սակայն չի արտացոլում թողարկումների ժամանակագրական հաջորդականությունը կամ փոխկապակցվածությունը, որը դասակարգման հիմնական սկզբունքներից է: Հետագայում Դ. Մեթքալֆի, Ֆ. Գրիերսոնի, Վ. Իվանիշևիչի կատարած լրացումների և ճշգրտումների շնորհիվ տարբերակների քանակը հասավ 83-ի[13]:

Ո՞րն է բազմաքանակ տարբերակների գոյության պատճառը: Արդյո՞ք դրանք դրամահատարանի կամ արհեստանոցի, թե՞ թողարկումների առանձին խմբերն իրարից զատելու համար արված նշաններ են: Այդ խմբերը ժամանակագրորեն հաջորդե՞լ են միմյանց, թե՞ կան այնպիսիները, որոնք թողարկվել են զուգահեռաբար: Հարցականների այս գայթակղիչ անորոշության կողքով անտարբեր չեն անցնել բյուզանդական դրամներով զբաղվող հետազոտողները: Դ. Մետքալֆը[14] և Վ. Իվանիշևիչը[15], հիմնավոր զբաղվելով A դասի տարբերակների քննությամբ, փորձել են գտնել վերոնշյալ հարցերի պատասխանները: Նրանք, վերլուծելով տարբերակների ոճական և չափագրական տվյալները, խմբավորել են դրանք և կատարել փուլային բաժանում:

Դ. Մետքալֆը կարծում է, որ A դասի տարբերակների գոյությունը պետք է բացատրել դրանց տարբեր վայրերում թողարկված լինելու հանգամանքով, և առանձնացնում է կենտրոնական Հունաստանի, մայրաքաղաքային և պրովինցիալ թողարկումներ: Բելինջերյան 51 տարբերակները նա բաժանում է 9 խմբի, ապա տալիս է դրանց թողարկման փուլերը.

A1 փուլ (Հովհաննես I Չմշկիկ) – I խումբ,
A2 փուլ (Վասիլ II) – II և III խմբեր,
A3 փուլ (Կոստանդին VIII) – IV և VI խմբեր[16]:

Ծաղկաձորի գանձի դրամները մտնում են նրա դասակարգման II, III, IV, V և VIII խմբերի մեջ: Այսինքն՝ դրանք կենտրոնական Հունաստանի (III խումբ), մայրաքաղաքային (II խումբ) և պրովինցիալ (V խումբ) թողարկումներ են, որոնք ժամանակագրորեն համապատասխանում են A2 և A3 փուլե-

---

[12] Տե՛ս **Bellinger A.,** նշվ. աշխ., էջ 11-13:

[13] Որոշակի վերապահումով ենք վերաբերվում մի քանի տարբերակների գոյությանը՝ համարելով, որ նույն նշաններ ունեցող որոշ տեսակներ մաշվածության կամ ոչ հստակ դրոշմվածքի պատճառով սխալմամբ դիտվել են որպես առանձին տարբերակներ:

[14] Տե՛ս **Metcalf D.**, Provincial Issues among the Byzantine Bronze Coinage of the Eleventh Century, *Hamburger Beitrage zur Numismatik,* Bd. 5, 1961, էջ 25-32: Տե՛ս նաև՝ **Metcalf D.**, The Coinage of Thessaloniki, 829-1204, and its Place in Balkan Monetary History, *Balkan Studies* 4, 1963, էջ 277-288, **Metcalf D.**, The Byzantine Bronze Coinage in the East Mediterranean World, *Congresso Internazionale di Numismatica, Roma, 11-16 settembre 1961,* Rome, 1964, էջ 521-530, **Metcalf D.**, *Coinage in the Balkans,* Thessaloniki, 1965, էջ 41-57, **Metcalf D.**, նշվ. աշխ., էջ 1-40, **Metcalf D.**, նշվ. աշխ., էջ 199-219:

[15] Տե՛ս **Ivanišević V.,** նշվ. աշխ., էջ 19-41:

[16] Դ. Մետքալֆը V, VII, VIII և IX խմբերը չի ներառել A1, A2, A3 փուլային բաժանման մեջ և այդ մասին բացատրություն չի տվել (տե՛ս **Metcalf D.**, նշվ. աշխ., էջ 210):

րին: Դրամաթողարկման նման տեղայնացումն այնքան էլ հիմնավորված չէ, քանի որ միևնույն ոճը և կատարողական առանձնահատկություններն ունեցող դրամները դիտարկվել են որպես տարբեր դրամահատարանների թողարկումներ, և ընդհակառակը՝ նույն հատկանիշներով իրարից տարբերվող դրամները՝ որպես մեկ դրամահատարանի արտադրանք: Դ. Մետքալֆի՝ նման եզրակացությունների պատճառն այն է, որ նա ուսումնասիրել է սահմանափակ քանակի դրամներ՝ հայտնաբերված Աթենքից, Կորնթոսից, կենտրոնական Բալկաններից և հյուսիսարևելյան Թուրքիայից, որոնց վերլուծությունը տվել է տարբերակների տեղայնացման վերը նշված պատկերը: Այդ առումով Վ. Իվանիշևիչի հետազոտությունն ավելի ընդգրկուն է, քանի որ նա ուսումնասիրել է Սերբիայից, Բուլղարիայից, Ռումինիայից, Հունաստանից, Սիրիայից, Թուրքիայից և նախկին ԽՍՀՄ տարածքներից հայտնաբերված դրամական գանձերը և առանձին դրամները: Անդրադառնալով Մետքալֆի ուսումնասիրությանը՝ Իվանիշևիչը նշում է, որ չի կարող համաձայնվել տարբերակները որոշակի դրամահատարանի վերագրելու տեսակետին, քանի որ նորահայտ տվյալները ցույց են տալիս, որ կոնկրետ դրամահատարանին կամ աշխարհագրական վայրին վերագրված դրամներ մեծ քանակությամբ հայտնվում են այլ տարածաշրջաններում ևս: Այս տարածայնությունները ցույց են տալիս, որ անանուն ֆոլիսների թողարկումը տարբեր դրամահատարաններին վերագրելու խնդրի լուծումը դեռևս բավարար չափով հիմնավորված չէ փաստական նյութերով:

Վ. Իվանիշևիչը լրացրել և ամբողջացրել է բելինջերյան աղյուսակի տարբերակները և խմբավորել է դրանք չորս հաջորդական թողարկումների մեջ: Նրա կարծիքով, գոյություն են ունեցել հիմնական թողարկումներ, որոնք երկարատև իրագործման ընթացքում ոճական, պատկերագրական, չափագրական փոփոխությունների են ենթարկվել: Նրա դասակարգած չորս խմբերից առաջին երեքը համապատասխանում են Վասիլ II-ի կառավարման տարիներին, իսկ չորրորդը, որը նա շարունակում է կոչել A2, այլ ոչ թե A3, ինչպես Դ. Մետքալֆը՝ Կոստանդին VIII-ի կայսրության շրջանին: Ծաղկածորի դրամները հիմնականում համապատասխանում են Իվանիշևիչի դասակարգած A2.I և A2.II թողարկումներին: Վ. Իվանիշևիչը տալիս է նաև այս չորս թողարկումների ժամանակագրությունը. մեզ հետաքրքրող առաջին երկու թողարկումների համար՝ A2.I – 976-1001 թթ., A2.II – 1001-1010/15 թթ:

Հաշվի առնելով, որ Դ. Մետքալֆի և Վ. Իվանիշևիչի դասակարգման արդյունքները միմյանցից էականորեն տարբերվում են, և այս խնդրում քիչ չեն անորոշությունները, մենք կատարեցինք ինքնուրույն ուսումնասիրություն՝ հիմնվելով նորահայտ գանձի և ՀՊԹ-ում պահվող այլ գանձերի ու առանձին հայտնաբերված դրամների տվյալների վրա (շուրջ 1200 դրամ): Ծաղկածորի գանձի դրամները խմբավորվեցին ըստ տարբերակների, որոնք 29 են[17]: Գանձը թաքցնելու ժամանակը ճշտելու համար պետք էր պարզել, թե այդ տարբերակներից որը կամ որոնք են ամենաուշը թողարկվել: Պատկերագրական և ոճական առանձնահատկությունների հիման վրա

[17] Տե՛ս **Ivanišević V.,** նշվ. աշխ., էջ 23-ում տրված աղյուսակը: Գանձի դրամները համապատասխանում են 1, 2, 3, 4, 5, 6, 8, 9, 9a, 11, 14, 16, 16a, 18, 20, 20b, 21, 23, 24b, 25, 26, 31, 35, 36, 40, 40a, 48, 49, 50 համարներին:

ձևավորվեցին սերտ կապեր ունեցող տարբերակների խմբեր, որոնք բաժանվեցին երեք ժամանակագրական փուլերի: Դրամները ենթարկվեցին չափագիտական վերլուծության, որի միջոցով ստացվեցին յուրաքանչյուր խմբի կշռային և չափային (տրամագծի) միջին տվյալները: Դրա հիման վրա պարզեցինք յուրաքանչյուր խմբի դրամների կշռային հարաբերակցությունը պղնձե ֆունտի նկատմամբ, որով ուրվագծվեց կշռային փոփոխությունների որոշակի օրինաչափություն: Այնուհետև ոսկե դրամների հետ ոճական և պատկերագրական համաժամանակյա զուգահեռների միջոցով փորձ արվեց հիմնավորելու խմբերի հաջորդական կամ զուգահեռ ժամանակագրությունը: Ի վերջո, ոճապատկերագրական և չափագիտական ուսումնասիրությունների արդյունքները մեզ թույլ տվեցին առանձնացնելու թողարկման հետևյալ փուլերը, որոնք բոլորն էլ տեղավորվում են Վասիլ II-ի կառավարման շրջանի մեջ. սկզբնական փուլ՝ I խումբ, միջին փուլ՝ II և IIա խմբեր, վերջին փուլ՝ III և IIIա խմբեր (յուրաքանչյուր խումբը ներկայացնող դրամների լուսանկարները տե՛ս տախտակ 2): Չենք տալիս որոշակի տարեթվեր, քանի որ դրա համար բավարար փաստարկներ չունենք:

Վստահությունը, որ գանձի դրամները թվագրվում են միայն Վասիլ II-ի գահակալության շրջանով, հիմնված է Վասիլ II-ի և նրանից առաջ ու հետո կառավարած կայսրերի ոսկե դրամների և ֆոլիսների վրա պատկերված Քրիստոսի կիսանդրու պատկերագրության ոճական և կատարողական մանրամասների համադրման վրա: Այդպիսի վերլուծությունը հնարավորություն տվեց հետևելու դրամական տիպի ձևափոխման ընթացքին և բացահայտելու իրար մոտ գտնվող թողարկումների շղթաներ: Վերջիններիս հաջորդականության խնդիրներին չենք անդրադառնա, քանի որ դա մենագրական հետազոտության նյութ է:

Այժմ փորձենք քննության առնել պատմական այն իրավիճակը, որում գտնվում էր Հայաստանի այդ հատվածը գանձի գոյացման ժամանակաշրջանում: Ցավոք, ամրոցի խիստ ավերված լինելու հանգամանքը, իսկ պահպանված հատվածներում՝ միայն մասնակի պեղումներով սահմանափակվելու իրողությունը թույլ չտվեցին ավելին իմանալ այդ կառույցի մասին: Այդուհանդերձ, ռազմական մի հենակետ, որն այդքան մոտ էր գտնվում Կեչառիս վանական համալիրին, չէր կարող որոշակի առնչություն չունենալ վերջինիս հետ:

Կեչառիսի ամենահին՝ Սբ. Գրիգոր եկեղեցու հարավային մուտքի բարավորի վրա պահպանվել է հիմնադրման արձանագրությունը՝

ՆՉԲ Թ ՀԱ Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵ
ԱՆ ԳԱԳԿԱ ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԷՏՈՒԹԵԱՆ ՏՆ
ՍԱՐԳՍԻ ԵՍ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՌՈՍ ՈՐԴԻ ՀԱՍԱՆ
Ա ՇԻՆԷՑԻ ԶԷԿԷՂԷՑԻՍ ԻՆՉ Ի ԲԱՐԷԽՈՍՈՒԹՆ ԵՒ Ի
Մ ՊԱՏՐՈՆԻՆ ԵՒ ԻՄ ՈՐԴԵԱՑՆ ՈՐՔ ԸՆԹԷՌՆՈՅՔ Զ
ԻՍ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԷՑԷՔ Ի ՔՍ ԱՂԱՉԵՄ:

Ղ. Ալիշանը[18], ապա Գ. Հովսեփյանը[19] և Ն. Ակինյանն[20] իրենց ուսում-

[18] Տե՛ս **Ղևոնդ Ալիշան**, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 259:

[19] Տե՛ս **Գարեգին վրդ. Յովսէփեան**, Գրչութեան արուեստը հին հայոց մեջ (Քարտէս հայ Հնագրութեանց), մասն Գ, Վաղարշապատ, 1913, էջ 13:

[20] Տե՛ս **Ն. Ակինեան**, Գրիգոր Ապիրատ, որդի Հասանայ, Մագիստրոս, «Ակօս», 9, 1945, էջ 12-13, նույնի՝ Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 374:

նասիրություններով բացահայտել են, որ արձանագրության թվականը՝ ՆՁԲ (1033 թ.), սխալ է[21]: Այս վրիպակը նրանք առաջարկում են ընթերցել ՆԾԲ (1003 թ.): Ավելին, Ն. Ակինյանը նկատում է, որ տվյալ արձանագրության մեջ հիշատակված Գրիգորին ճիշտ չէ նույնացնել Գրիգոր Մագիստրոս Պահլավունու հետ[22]: Այս խնդիրներին անդրադարձել են նաև Գ. Սարգսյանը[23] և Կ. Մաթևոսյանը[24], ովքեր նորահայտ փաստերի հիման վրա իրենց հոդվածներում մանրամասն քննարկել ու հիմնավորել են, թե ինչու եկեղեցու հիմնադիրը Գրիգոր Մագիստրոս Պահլավունին չէ, այլ Հասանի որդի Գրիգոր Մագիստրոսն է[25]: Վերջինիս՝ որպես Կեչառիսի հիմնադրի, հիշատակում են նաև XII-XIII դդ. պատմիչները[26], նրան կոչելով ոչ թե Գրիգոր, այլ *Հասանի որդի Ապիրատ*, *հայոց մեծ իշխան*: Ըստ Ն. Ակինյանի՝ Գրիգորը և Ապիրատը նույն անձնավորությունն են: Կ. Մաթևոսյանը նկատել է, որ Ապիրատ ձևով նրան առաջինը հիշատակած Մաթևոս Ուռհայեցին և Մխիթար Անեցին իրենց պատմությունը շարադրել են իշխանի մահից շուրջ 110 և 170 տարի հետո: Իր և ժամանակակիցների վիմագիր արձանագրություններում նա անվանվում է Գրիգոր Մագիստրոս կամ Գրիգոր Մագիստրոս որդի Հասանի[27]: Այսինքն՝ Ապիրատը ուշ շրջանում կիրառված մականուն է:

Կեչառիսում Գրիգորի գործունեության ժամանակահատվածի ուսումնասիրությունը առանձնակի կարևորություն ունի մեզ համար, քանի որ համընկնում է գանձը թաքցնելու շրջանի հետ: Ներկայումս հայտնի ամենավաղ արձանագրությունը, որտեղ Գրիգորը հիշատակվում է մագիստրոս պատվաստիճանով, հայտնաբերվել է Արզական գյուղում և թվագրվում է 1001[28]: Այս թվականի հետ կապված կարևոր վկայություն կա Ստեփանոս Տարոնացու մոտ: Նա գրում է, որ Տայքի Բագրատունի իշխան Դավիթ Կուրապաղատի կտակած հողերը ստանալու համար Վասիլ II-ը նրա մահից

---

[21] Հաշվի առնելով այն փաստը, որ 1033 թ. Գագիկ Ա Բագրատունին չէր թագավորում, և կաթողիկոսը Սարգիս Ա Սևանցին չէր:

[22] Անտեսելով վերոհիշյալ հեղինակների բացահայտումները՝ դեռևս շարունակում է շրջանառվել այն տեսակետը, որ Սբ. Գրիգոր եկեղեցու հիմնադիրը Գրիգոր Մագիստրոս Պահլավունին է, իսկ կառուցման տարեթիվը՝ 1033 թվականը, (տե՛ս, օրինակ, «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, Եր., 1976, էջ 395):

[23] Տե՛ս **Գ. Սարգսյան**, Գրիգոր-Ապիրատ Հասանյան. Հիմնադիր Կեչառիսի վանքի (վիմագրական նոր վկայություններ), «Հին Հայաստանի մշակույթը» XII, Եր., 2002, էջ 107-112:

[24] Տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Հազարամյա Կեչառիսի հիմնադրման պատմությունից, «Էջմիածին», Ա, 2004, էջ 77-91, նույնի՝ Գրիգոր Ապիրատ Հասանյանը և նրա տոհմը 11-րդ դարում, «Բանբեր մատենադարանի», թիվ 18, Եր., 2008, էջ 67-93:

[25] Էական է այն փաստը, որ Գրիգոր Պահլավունու հոր անունը Վասակ էր, ոչ թե Հասան: Բացի այդ, Լաստիվերցու վկայությամբ, Գրիգոր Պահլավունին մագիստրոսի տիտղոս ստացել է միայն Բագրատունիների անկումից հետո՝ 1045 թ. (տե՛ս **Արիստակես Լաստիվերցի**, Պատմություն, թարգ.՝ Վ. Գևորգյան, Եր., 1971, էջ 36):

[26] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, ժամանակագրութիւն, թարգ. և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Եր., 1991, էջ 16-17, «Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1892, վերահրատարակում, Եր., 2001, էջ 102-103, **Մխիթար Այրիվանեցի**, Պատմութիւն Հայոց, Մոսկուայ, 1860, էջ 58:

[27] Արզականի 1001 թ. արձանագրության մեջ՝ «ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ՄԱԳԻՍՏՌՈՒՍԻ» (տե՛ս **Գ. Սարգսյան**, նշվ. աշխ., էջ 111): Կեչառիսի 1003 թ. արձանագրության մեջ՝ «ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՌՈՍ ՈՐԴԻ ՀԱՍԱՆԱ» (տե՛ս **Ղևոնդ Ալիշան**, նշվ. աշխ., էջ 259): Գրիգորի դստեր 1042 թ. Տեկորի արձանագրության մեջ՝ «ՔՐԳՈՐՈՅ ՄԱԳԻՍՏՌՈՍԻՆ» (տե՛ս **Ղևոնդ Ալիշան**, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 135):

[28] Տե՛ս **Գ. Սարգսյան**, նշվ. աշխ., էջ 111:

հետո՝ 1000/1001 թ., եկավ արևելք[29]: Ճանապարհին կուրապաղատի և մագիստրոսի պատվաստիճաններ շնորհեց իր մոտ եկած *թագավորներին*[30]: Ասողիկը հայտնում է, որ Վասիլ II-ը, կանգ առնելով Վաղարշակերտ քաղաքի մոտ, կարծում էր, որ նրա մոտ կգա նաև Գագիկ I Բագրատունին, որը, սակայն, «փոքրութիւն» համարեց այդ քայլին դիմելը: Այսինքն՝ Գագիկ I-ից բացի, հայ, վրաց և աբխազ գրեթե բոլոր մեծ իշխանները ստացել են այս տիտղոսները: Տվյալ ենթատեքստում համոզիչ է Ն. Ակինյանի տեսակետը, որ Հասանի որդի Գրիգորը նույնպես այդ ժամանակ է ստացել մագիստրոսի տիտղոսը[31]: Մագիստրոս պատվաստիճանին արժանանալու համար[32] Հասանի որդի Գրիգորը պետք է որ ժամանակի նշանավոր և ազդեցիկ իշխաններից մեկը լիներ: Դա հաստատվում է գրավոր աղբյուրների տեղեկություններով, որոնք վկայում են, որ Գրիգորն անմիջական մասնակցություն է ունեցել երկրում ընթացող քաղաքական իրադարձություններին[33]:

Կ. Մաթևոսյանը, հղելով Հ. Բարթիկյանին, ենթադրում է, որ մագիստրոս տիտղոսի համար Գրիգորը պետք է շոշափելի դրամական վարձատրություն ստանար կայսրից[34]: Իհարկե, Բյուզանդիայի կայսրերն ամենամյա ռոճիկ (ρογα) տալու ավանդույթ ունեին[35], բայց իրականում արդյո՞ք

---

[29] Վասիլ կայսեր ժամանակակից Գրիգոր Նարեկացին «Մատյան ողբերգության» պոեմի ավարտելու տարեթիվը նշելու համար հիշատակում է այս կարևոր իրադարձությունը (տե՛ս **Ս. Գրիգոր Նարեկացի**, Մատեան Ողբերգութեան (Նարեկ), Յիշատակարան մատենիս գրութեան, Ս. Էջմիածին, 2013, էջ 623-625):

[30] **Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան**, Պատմութիւն Տիեզերական, Սանկտ Պետերբուրգ, 1885, էջ 275-278:

[31] Տե՛ս **Ն. Ակինեան**, Գրիգոր Ապիրատ, որդի Հասանայ, Մագիստրոս, էջ 111:

[32] **Մագիստրոս տիտղոսի մասին տե՛ս** Bury J., **The Imperial Administrative System in the Ninth Century – with a revised text of the Kletorogion of Philotheos, London, 1911, էջ 29-32,** Guilland R., **Études sur l'Histoire administrative de l'empire byzantin. Le mystique, ὁ μυστικός. *Revue des études byzantines*, tome 26, 1968, էջ 14-28, *The Oxford Dictionary of Byzantium*, ed. Kazhdan A., New York, 1991, էջ 1267:**

[33] Գագիկ I-ի մահից հետո՝ 1017 թ. (Կ. Յուզբաշյանը համոզիչ փաստարկներով առաջարկում է Գագիկ I-ի մահվան տարեթիվը համարել 1016 կամ 1017 թ., այլ ոչ թե 1020 թ., տե՛ս **Юзбашян К.**, Армянские Государства Эпохи Багратидов и Византия IX-XI вв., М., 1988, էջ 156-157), նրա որդիներ Հովհաննես-Սմբատի և Աշոտի միջև ժառանգության համար պայքար է ծավալվում, որին նախ աբխազաց թագավոր Գեորգի I-ն է միջամտում, ապա՝ կաթողիկոս Պետրոս Գետադարձը և իշխանները (միգուցե նաև Հասանի որդի Գրիգոր Մագիստրոսը): Արդյունքում, եղբայրները, համաձայնության գալով, Բագրատունիների հարստությունը բաժանում են երկու մասի, ըստ որի՝ Հովհաննեսը պետք է իշխեր Անիում և նրա շրջակա տարածքներում, իսկ «զԱշոտը դրուց աշխարհում՝ թագաւոր ամենայն տանն Հայոց» (տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, նշվ. աշխ., էջ 15): Կամ, ինչպես հայտնում է Արիստակես Լաստիվերցին, Աշոտին անցավ երկրի ներքին մասը, որը սահմանակից էր Պարսկաստանին և Վրաստանին (տե՛ս **Արիստակես Լաստիվերցի**, նշվ. աշխ., էջ 6): Այսինքն՝ Կեչառիսի իշխան Գրիգորի տիրույթներն անցնում են Աշոտի գերակայության տակ: Նույն հեղինակը հայտնում է, որ Աշոտը խնդիրներ ուներ իրեն պատկանող տարածքներում իշխելու հարցում: Այդ կապակցությամբ մեկնում է «Հոռոմոց արքունիք», որտեղ ստանալով կայսեր ռազմական աջակցություն՝ վերադառնում և հարթում է խնդիրը (տե՛ս նույն տեղը): Աշոտը, չկարողանալով զսպել Անին տիրելու անհագուրդ ցանկությունը, չնայած պայմանավորվածությանը, ինչպես հայտնում է Վարդան Արևելցին, 1021 թ. եղբորը խաբեությամբ կանչում է Թալին և ծուղակի մեջ գցելով՝ տալիս է Կեչառիսի մեծ իշխան Ապիրատին, որ սպանի նրան: Գրիգոր Ապիրատը, սակայն, ազատ է արձակում թագավորին... (տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանչալ», էջ 102-103):

[34] Տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Հազարամյա Կեչառիսի..., էջ 83-84:

[35] Տե՛ս **Lemerle P.**, «Roga» et rente d'État aux Xe-XIe siècles, *Revue des études byzantines*, tome 25, Paris, 1967, էջ 77-100, **Oikonomides N.**, Title and Income at the Byzantine Court, *Byzantine Court Culture from 829 to 1204,* ed. H. Maguire, Washington, 1997, էջ 197-215:

այդ վարձատրությունը շոշափելի էր և տրվում էր բոլորին, ովքեր ունեին մագիստրոսի կոչում, մանավանդ XI դարում, երբ այդ տիտղոսը շատերին էր շնորհվում: Մագիստրոս պատվաստիճանի համար խոշոր չափի վարձատրության մասին վկայություն կա Կոստանդին Ծիրանածնի մոտ. նա գրում է, որ Լևոն VI կայսրը (886-912 թթ.) Տարոնի իշխան Կրիկորիկին (Գրիգորին) շնորհեց մագիստրոսի և զորավարի աստիճան՝ տալով նաև ռոճիկ՝ տարեկան 10 լիտր ոսկի և 10 լիտր միլիարես (այսինքն՝ արծաթե դրամ)[36]: Ռոճիկի այս չափը բացառություն կարելի է համարել, քանի որ նույն աղբյուրից տեղեկանում ենք, որ Վասպուրականի իշխան Գագիկը, Իբերիայի կուրապաղատ Ատրներսեհը և իշխանաց իշխան Աշոտը բողոքում են Ռոմանոս I (920-944 թթ.) կայսերը, թե ինչու իրենք, ինչպես Տարոնացին, չեն ստանում նույնպիսի տարեկան վարձատրություն. «Նա մեզանից ի՞նչ ավել ծառայություններ է մատուցում, և կամ մեզանից ինչո՞վ է ավել օգուտ տալիս հռոմայեցիներին»[37]: Բողոքին ի պատասխան՝ Ռոմանոսը, որն ի՛նքը չէր սահմանել ռոճիկի այս չափը, 3-4 տարի անց ստիպված եղավ այն լրիվ դադարեցնել: Այսինքն, եթե X դարի առաջին կեսին կայսրը հրաժարվում է ոսկով և արծաթով ռոճիկ վճարելուց, կարծում ենք՝ քիչ է հավանականությունը, որ XI դարի սկզբում Վասիլ II-ը վերսկսեր 10 լիտր ոսկի և, արծաթի սղության պայմաններում՝ 10 լիտր արծաթ շռայլել մագիստրոսի պատվաստիճանի համար: Չի բացառվում, սակայն, որ իշխաններին (թագավորներին) կայսրությունից վասալական կախման մեջ գցելու նպատակով պատվաստիճաններ շնորհելով՝ Վասիլ II-ը նաև որոշակի վարձատրություն էր սահմանել նրանց համար[38]: Կրկին արժե հիշեցնել, որ Ծաղկածորի գանձի դրամները գրեթե չշրջանառված վիճակում են: Այս հանգամանքը մտածել է տալիս, որ այն ոչ թե շրջանառությունից հանված և ժամանակի ընթացքում կուտակված դրամներից կազմված հարստություն է, այլ, ըստ երևույթին, գանձատնից միանվագ դուրս բերված գումար: Վասիլ II-ը կայսրության արևելյան սահմաններն ընդլայնելու համար առերևույթ փոխշահավետ համաձայնություններ էր կնքում տեղական իշխանությունների հետ՝ ի տարբերություն արևմուտքի, որտեղ նա հարցերը լուծում էր ռազմական ճանապարհով: Պատմիչներն Ապիրատի (Գրիգորի) մասին գրելիս շեշտում են, որ նա ուներ 12.000 հեծելազոր[39]: Հնարավոր է, որ բյուզանդական մագիստրոսի տիտղոսը կրող *հայոց մեծ իշխան* Գրիգորը և Վասիլ II կայսրը փոխհամաձայնություն ունենային նաև այսպիսի մեծաքանակ զորք պահելու ծախսերի վերաբերյալ: Եթե վերոհիշյալ պատմական իրողությունների վրա հիմնված մեր այս եզրակացությունը ճիշտ է, կարելի է ենթադրել, որ կայսեր կողմից հայոց իշխանին ուղարկվող դրա-

---

[36] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, Կայսրության կառավարման մասին, Եր., 1970, գլ. 43, էջ 6, **Lemerle P.,** նշվ. աշխ., էջ 77-100:

[37] **Կոստանդին Ծիրանածին**, նշվ. աշխ., էջ 7: Այս մեջբերման մեջ հատկապես հետաքրքիր են Բյուզանդիային որոշ ծառայություններ մատուցելու վերաբերյալ հարցադրումները:

[38] «..Եւ ամիրայն Նփրկերտոյ քուերորդի Բատին եկն առ նա ի քաղաքն Երիզայ. և արքունատուր ընծայիւք պատուեալ զնա՝ տայ նմա զմաժիստռոսութեան պատիւն: Եւ հրամայէ զօրացն Չորրորդ Հայոց և Տարոնոյ՝ օգնական լինել նմա յոր պէտս և կոչեսցէ» (**Ստեփանոս Տարօնեցի**, նշվ. աշխ., էջ 276):

[39] Տե՛ս **Մխիթար Այրիվանեցի**, նշվ. աշխ., էջ 58:

մական միջոցների մի մասը կարող էր լինել նաև պղնձե դրամներով: Վասիլ կայսեր օրոք արծաթի ճգնաժամի պայմաններում որոշակի փոփոխություններ էին տեղի ունեցել ոսկե և պղնձե դրամների հարաբերակցության մեջ. ոչ թանկարժեք մետաղից հատված անանուն ֆոլիսները, որոնց անվանական արժեքն ավելի բարձր էր իրական արժեքից, ձեռք էին բերել, այսպես կոչված, *վարկային* նշանակություն: Փաստը, որ գանձը հայտնաբերվել է պաշտպանական նշանակություն ունեցող կառույցում, ավելի է մեծացնում հավանականությունը, որ այդ գումարը նախատեսված է եղել զինվորներին վճարելու կամ բանակային ծախսերի համար, հատկապես եթե հաշվի առնենք, որ կանխիկ դրամը հաճախ հենց այդ նպատակով է օգտագործվել:

Գանձում Կոստանդին VIII կայսեր օրոք հատված ֆոլիսների բացակայությունը և Վասիլ II-ի ուշ թողարկումների առկայությունը վկայում են, որ այն թաքցվել է Վասիլի կառավարման վերջին տասնամյակի ընթացքում՝ 1015-1025 թթ.: Հայաստանում 1017-1021/22 թվականներին Հովհաննես-Սմբատ և Աշոտ Բագրատունի եղբայրները գահակալական կռիվներ էին մղում միմյանց դեմ: Գրավոր աղբյուրներից գիտենք, որ Գրիգոր իշխանն անմիջական մասնակցություն է ունեցել այս պայքարին, որի հետևանքով հայտնվելով անելանելի վիճակում՝ ստիպված է եղել ընտանիքով և զորքով ապաստանել Դվինի Շեդադյան կառավարիչ Աբու-լ-Ասվարի մոտ: Այս իրադարձության մասին Ուռհայեցին գրում է, որ Հասանի որդի մեծ իշխան Ապիրատն ապստամբելով փախչում է Դվին, քանի որ նախկինում Աշոտի կողմն անցած լինելու պատճառով երկյուղում էր Հովհաննեսից[40]: Աշոտի հետ նույնպես ուներ խնդիրներ, քանի որ չէր կատարել նրա հրամանը[41]: Մեծ իշխանի փախուստը տեղի է ունեցել Դվինում Աբու-լ-Ասվարի հաստատման առաջին տարիներին, այսինքն՝ 1021/22 թթ.[42]: Այստեղ նա «բազում օրեր մեծարվում է» Աբու-լ-Ասվարի կողմից, ապա դավադրաբար սպանվում:

Գանձեր թաքցնելու բազմաթիվ պատճառներից է ծայրահեղ իրավիճակներում կամ վտանգի պայմաններում հապճեպ հեռանալը՝ վերադառնալու հույսով: Ըստ երևույթին այդպիսին է եղել իրավիճակը Կեչառիսում 1020-ական թվականների սկզբին:

Ամփոփելով ծաղկաձորյան գտածոյի հետազոտության արդյունքները, ուրվագծվում են նրա աղբյուրագիտական երկու կարևոր կողմերը: Լինելով անաղարտ գանձ, այն հնարավորություն է ընձեռում պարզաբանելու բյուզանդական դրամաթողարկման որոշ կնճռոտ հարցեր: Բացի այդ, գանձը կարևոր սկզբնաղբյուր է նաև հայագիտական ուսումնասիրությունների համար: Հայտնաբերված լինելով որոշակի հնագիտական միջավայրում, այն թույլ է տալիս լրացուցիչ լույս սփռել պատմագիտական այլ աղբյուրների շնորհիվ մեզ հայտնի միջնադարյան Հայաստանի պատմության մի հանգուցային դրվագի վրա:

---

[40] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, նշվ. աշխ., էջ 17:

[41] Տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանյալ», էջ 102-103:

[42] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Եր., 1965, էջ 209 (տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Անի-Շիրակի պատմության էջեր, Եր., 2010, էջ 117):

АСМИК ОВАННИСЯН – ***Клад анонимных византийских фоллисов из археологических раскопок на участке Хачер в Цахкадзоре.*** – Экспедиция Института археологии и этнографии НАН РА в 2007–2008 гг. провела раскопки на участке Хачер в Цахкадзоре, на холме юго-западнее монастырского комплекса Кечарис. Были раскопаны южный и северный фрагменты стены, защищавшей сильно разрушенную средневековую крепость, которая занимала площадь 1500 кв. м. В 2008 году у южного фрагмента крепостной стены был обнаружен глиняный кувшин, полный медных византийских монет. Клад состоял из 297 анонимных фоллисов (класс А), чеканенных при императоре Василии II (976–1025 гг.).

Анализ показал, что часть монет отчеканена в начальный, средний и поздний периоды его правления. Наличие в кладе поздних фоллисов Василия II и отсутствие фоллисов Константина VIII (1025–1028) дают основание предположить, что клад был зарыт в первой половине 1020-х годов. Его расположение внутри крепости наводит на мысль, что деньги предназначались для выплаты жалованья солдатам или для иных военных нужд.

В XI веке Цахкадзор принадлежал великому князю Григору Магистру, сыну Хасана, участника войн за престол между братьями Ованнесом-Смбатом и Ашотом Багратуни. Оказавшись в безысходном положении, Хасан с семьёй и войском искал убежища у Абу-л-Асвара, правителя Двина, где и погиб в 1021 или 1022 г. в результате заговора.

HASMIK HOVHANNISYAN – ***A Hoard of Byzantine Anonymous Folles from the Archaeological Excavations at the Khacher Site in Tsaghkadzor***. – In 2007-2008, the Institute of Archaeology and Ethnography NAS RA carried out excavations at the Khacher site in the town of Tsaghkadzor. The site is located on the hilltop, to the southwest of the Kecharis Monastery. Excavations were conducted in the southern and northern walls of an extremely ruined medieval fortress with a total area of about 1500 sq/m. In 2008 a clay pot filled with Byzantine copper coins was unearthed in the interior side of the fortress, on the foundation of the southern wall. The hoard consists of 297 anonymous folles of class A2 dating from the reign of Emperor Basil II (976-1025).

The results of the coin analysis show that they were minted in the early, middle and late periods of the reign of Basil II. The presence of the late issues of Basil II and the absence of the coins of his successor Constantine VIII (1025-1028) give reason to assume that the hoard was buried in the first half of the 1020s. The fact that the hoard was found at a defense construction allows us to suggest that the coins were intended for army or military expenses.

In the 10th-11th centuries, Tsakhkadzor was the territory of Great Prince Grigor Magistros, the son of Hassan. He was involved in the struggle for the throne between Bagratuni brothers Hovhannes-Smbat and Ashot. Consequently, he was in a complicated situation and was forced to leave Tsaghkadzor with his family and the army. Shaddadid ruler Abu-l-Aswar gave shelter to Prince Grigor in Dvin, where he was killed by conspirators. These historical events occurred in 1021/22.

Նկ.1

Նկ.2

ՏԱԽՏԱԿ 2

Ի փուլ. Ի խումբ

Ի փուլ. Իա խումբ

ԻԻ փուլ. ԻԻ խումբ

ԻԻ փուլ. ԻԻա խումբ

ԻԻԻ փուլ. ԻԻԻ խումբ

ԻԻԻ փուլ. ԻԻԻա խումբ

Նկ. 1

Նկ. 2